

ԿԱՆԱԶ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ



Բովանդակություն

1. Հապավումներ	2
2. Նախաբան	3
2.1. «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» (ԱՀԸ) ՎՎԿ ՓԲԸ	3
2.2. Էներգաարդյունավետ վարկերի ներդրումն ԱՀԸ-ում	4
3. ԿԱՆԱԶ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ	5
4. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ	7
5. ՆԱԽԱԳԾԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ	12
6. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	16
7. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ	17
8. ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ	19
8.1. Արտաքին գնահատում (նախքան թողարկումը)	19
8.2. Արտաքին աուդիտ (թողարկումից հետո)	19
9. Հավելված Ա. Չֆինանսավորվող գործունեության տեսակներ	20



1. Հապավումներ

ՖՀԳ	Ֆրանսիայի զարգացման գործակալություն (AFD)
ԱՊԿԿ	Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտե
ՍԱԶԲ	Սևծովյան առևտրի և զարգացման բանկ
CO2	Ածխաթթու գազ
ԷԱ	Էներգաարդյունավետություն
ԷԱԳԳ	Էներգաարդյունավետության գնահատման գործիք
ԵՄ	Եվրոպական միություն
ԿՊԿ	Կանաչ պարտատոմսերի ենթակոմիտե
ԿՊՍ	Կանաչ պարտատոմսերի սկզբունքներ
ԿՊՍՏ	Կանաչ պարտատոմսերի ստանդարտներ
ԶԳ	Զերմոցային գազեր
ԿՇՄԱ	Կապիտալի շուկաների միջազգային ասոցիացիա
ՎՎԲ	Վերակառուցման վարկերի բանկ (KfW)
ԿՎտԺ	Կիլովատտ/ժամ
ԱՀԸ	Ազգային հիփոթեքային ընկերություն
ԳՖՀ	Գործընկեր ֆինանսական հաստատություններ
ՖՎ	Ֆոտովոլտային
tCO2e	Ածխաթթու գազի համարժեք, տոննա
ՄԱԶԾ	Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր



2. Նախաբան

2.1. «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» (ԱՀԸ) ՎՎԿ ՓԲԸ

Ազգային հիփոթեքային ընկերությունը (այսուհետ՝ «ԱՀԸ» կամ «Ընկերություն») հիմնադրվել է 2009թ. որպես վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն, փակ բաժնետիրական ընկերության կազմակերպական-իրավական ձևով: ԱՀԸ-ի նպատակն է՝ բարձրացնել հիփոթեքային վարկերի հասանելիությունը Հայաստանում, որպեսզի բնակելի տարածքներն ավելի մատչելի լինեն բոլոր այն ընտանիքների համար, ովքեր ունեն միջին և ցածր եկամուտ: ԱՀԸ-ն հատուկ ուշադրություն է դարձնում կառուցապատման այն նախագծերին, որոնք առաջնահերթություն են տալիս էներգաարդյունավետությանը:

Ազգային հիփոթեքային ընկերությունն առանցքային դեր է կատարում Հայաստանի բնակարանային ֆինանսավորման համակարգի հզորացման գործում: Գործելով որպես մեծածախ վարկատու, որը վերաֆինանսավորում է բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվող հիփոթեքային վարկերը, ԱՀԸ-ն նպաստում է Հայաստանի հիփոթեքային շուկայի իրացվելիությանը, կայունությանը և հասանելիությանը: Ընկերությունն ունի իր գործունեության ոլորտում ստանդարտներ սահմանելու երկարամյա պատմություն և հետևողականորեն բացահայտում ու օգտագործում է աճի և բարելավման հնարավորությունները՝ շուկայի կարիքներին համահունչ:

ԱՀԸ-ն համագործակցում է բազմաթիվ միջազգային ֆինանսական հաստատությունների հետ, այդ թվում՝ ՖՁԳ, ՎՎԲ, ՍԱԶԲ, Հարևանության ներդրումային հիմնադրամ և ՄԱԶԾ, իր ֆինանսավորման հնարավորություններն ընդլայնելու և իր նպատակներին հասնելու համար պահանջվող կարողությունները հզորացնելու նպատակով:

2021թ. Հայաստանը թարմացրեց Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2021-2030թթ. Ազգային մակարդակով սահմանված



գործողությունների (ԱՍԳ) իրականացման ծրագիրը: Երկիրը զգալի առաջընթաց է գրանցել ցածր ածխածնային տնտեսությանն անցում կատարելու ուղղությամբ՝ շնորհիվ հավասարակշռված կառուցվածքային փոփոխությունների, վերականգնվող էներգետիկ ռեսուրսների համատարած օգտագործման, ցածր ածխածնային տեխնոլոգիաների ներդրման և էներգաարդյունավետության միջոցառումների իրականացման: Բնակարանային ոլորտը համարվում է Հայաստանի ցածր ածխածնային անցման կարևորագույն բաղադրիչ, իսկ բնակարանային ֆոնդի էներգաարդյունավետության բարձրացումն ածխածնի արտանետումների նվազեցման ամենաարդյունավետ միջոցներից է: Հայաստանի բնակարանային ֆոնդը դեռևս խիստ ոչ-էներգաանարդյունավետ է, և այդ իրավիճակը փոխելու խնդիրն առաջնահերթ է մեր երկրում կլիմայի փոփոխության դեմ պայքարի համար: Անցումային գործընթացին նպաստելու նպատակով ԱՀԸ-ն ներդրել է արտոնյալ պայմաններով վարկատեսակներ՝ նպատակ ունենալով նվազեցնել էներգիայի սպառումը և ածխաթթու գազի արտանետումները, ինչպես ներկայացված է ներքոշարադրյալ բաժիններում:

Որպես Հայաստանի բնակարանային ֆինանսավորման համակարգի անբաժանելի մաս, ԱՀԸ-ն պատասխանատվություն է ստանձնում՝ առաջնորդելու և պետության բնակարանային ոլորտում էներգաարդյունավետության բարձրացմանը նպաստելու համար: Ընկերությունը ծրագրում է հետագայում նույնպես համապատասխան վարկատեսակներ մշակել և պարզեցնել իր գործընթացները՝ միջազգային լավագույն փորձին համապատասխան, այդպիսով ավելի հասանելի դարձնելով հիփոթեքային ֆինանսավորումը Հայաստանի բնակչության համար և միևնույն ժամանակ խթանելով նորարարական և էներգաարդյունավետ ներդրումները բնակարանային ֆոնդում:

2.2. Էներգաարդյունավետ վարկերի ներդրումն ԱՀԸ-ում

2014թ. սկսած, միջազգային զարգացման հաստատությունների (ՖՀԳ, ԵՄ, ՎՎԲ և ՄԱԶԾ) հետ սերտ համագործակցության շնորհիվ, ԱՀԸ-ն իրականացրել է էներգաարդյունավետության և ռեսուրսների արդյունավետության բարձրացմանն ուղղված տարբեր նախագծեր, ինչպես նաև նախագծեր՝ կապված վերականգնվող



Էներգետիկայի հետ: Այդ նախագծերի նպատակն է՝ խթանել բնակելի շենքերի վերանորոգումը, գնումը կամ կառուցումը, շեշտը դնելով էներգաարդյունավետության բարելավման վրա: Բացի այդ, ԱՀԸ-ն վերանայել է իր գործող պրոդուկտների տեսականին՝ ներդնելով վարկատեսակներ, որոնք նպաստում են էներգաարդյունավետության ապահովմանը, միաժամանակ տրամադրելով մատչելի միջոցներ՝ բնակարանային պայմանները բարելավելու համար: ԱՀԸ-ն նաև իրականացրել է իրազեկման արշավներ՝ Հայաստանի բնակչությանը էներգաարդյունավետ ներդրումների առավելությունները ներկայացնելու նպատակով:

Տարիների ընթացքում ԱՀԸ-ն մշակել է մի շարք վարկատեսակներ՝ ուղղված էներգաարդյունավետ վերանորոգմանը, գնմանը և առանձնատների կառուցմանը, իր գործընկեր բանկերի և վարկային կազմակերպությունների օգնությամբ ակտիվորեն խթանելով դրանց օգտագործումը Հայաստանի հիփոթեքային շուկայում: Այս փոփոխություններին համահունչ, Ընկերությունը պարզեցրել է իր ներքին բիզնես գործընթացները, այդ թվում՝ կապված մոնիտորինգի և ազդեցության գնահատման հետ, ինչպես նաև մշակել և շարունակաբար կատարելագործել է էներգաարդյունավետության գնահատման և հաշվետվողականության ապահովման գործիքները՝ սահմանելով ուղենիշային չափորոշիչ ոլորտի համար: ԱՀԸ-ն նաև ներդրել է էներգաարդյունավետության հավաստագրման պահանջ բազմաբնակարան շենքերի կառուցապատման նախագծերի համար՝ նպաստելով ազգային էներգաարդյունավետության և սեյսմիկ անվտանգության չափանիշների ապահովմանը:

Տարիների ընթացքում իրականացվող այդ աշխատանքների արդյունքում էներգաարդյունավետ վարկերի ծավալային մասնաբաժինը 2023թ. հասավ 28%-ի, իսկ քանակային մասնաբաժինը՝ 62.5%-ի, ինչը զգալի աճ է՝ 2015թ. գրանցված ընդամենը 4% ծավալային և 20% քանակային մասնաբաժնի համեմատ:

3. ԿԱՆԱԶ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ

ԱՀԸ-ն Հայաստանի պարտատոմսերի շուկայի մշտական մասնակիցն է: 2023թ. տարեվերջի դրությամբ ԱՀԸ-ն իրականացրել է ընդհանուր առմամբ քանչորս



թողարկում տեղական կապիտալի շուկաներում: 2023թ.-ին, AFD-ի աջակցությամբ, Դելոյտ խորհրդատվական ընկերության Փարիզի մասնաճյուղը ԱՀԸ-ում կատարեց խորացված վերլուծություն չորս հիմնական ուղղություններով (դրամական միջոցների օգտագործում, նախագծերի գնահատման և ընտրության գործընթաց, դրամական միջոցների կառավարում և հաշվետվություններ): Նրանց խորհուրդներին համապատասխան, ԱՀԸ-ն ձեռնարկեց ներքին գործընթացների օպտիմալացման ընդարձակ գործընթաց՝ կանաչ պարտատոմսերի շուկայի ընդհանուր սկզբունքներին լիարժեք համապատասխանություն ապահովելու նպատակով:

Կանաչ պարտատոմսերի նախագծերը, ի լրումն կլիմայի փոփոխության դեմ պայքարի, ապահովում են պարտատոմսերի շուկայի կայունությունը՝ առավել թափանցիկության և տեսանելի ազդեցության շնորհիվ: ԱՀԸ-ն մշակել է սույն Կանաչ պարտատոմսերի հայեցակարգը՝ որպես իր կայուն զարգացման ռազմավարության մաս, նպատակ ունենալով ուշադրության կենտրոնում պահել այն ակտիվները, որոնք դրական բնապահպանական և սոցիալական ազդեցություն են գործում, նպաստելով էկոլոգիապես մաքուր ապագային անցմանը:

Սույն Կանաչ պարտատոմսերի հայեցակարգը համահունչ է ԿՇՄԱ-ի Կանաչ պարտատոմսերի սկզբունքներին (ԿՊՍ): Հայեցակարգը մշակելիս հատուկ ուշադրություն է դարձվել ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակների (ԿՁՆ) ապահովմանը: ԱՀԸ-ն հատկապես կարևորում է ԿՁՆ-ներով սահմանված որոշակի նպատակների իրագործումը, ինչպես, օրինակ, Մատչելի և էկոլոգիապես մաքուր էներգիա, էկոլոգիապես մաքուր քաղաքներ և համայնքներ, Պայքար կլիմայի փոփոխության դեմ, որոնք մանրամասն ներկայացված են կայուն զարգացմանը վերաբերող համապատասխան ներքին քաղաքականության մեջ:

ԿՊՍ-ների հնարավոր փոփոխությունները և էկոլոգիապես մաքուր տնտեսական գործունեության մասով առկա լավագույն փորձը կներառվեն Հայեցակարգի հետագա տարբերակներում: ԱՀԸ-ն պարտավորվում է պահպանել և բարձրացնել թափանցիկության և հաշվետվողականության ներկայիս մակարդակները: Այդ նպատակով ԱՀԸ-ն արտաքին գնահատում կատարելու համար ներգրավելու է կիրառելի սկզբունքներին կամ ստանդարտներին բավարարող կազմակերպություն: ԱՀԸ-ն նաև հանրային օգտագործման համար հասանելի է դարձնելու



էներգաարդյունավետության գնահատման մեթոդոլոգիան և համապատասխան գնահատման գործիքը:

ԱՀԸ-ի Կանաչ պարտատոմսերի հայեցակարգը կոչված է ապահովելու, որպեսզի Ընկերությունը հնարավորություն ունենա Կանաչ պարտատոմսեր թողարկել ներդրողների համար՝ ինչպես փակ, այնպես էլ հրապարակային տեղաբաշխումների միջոցով: Թողարկված յուրաքանչյուր Կանաչ պարտատոմսի առնչությամբ ԱՀԸ-ն պարտավորվում է ապահովել սույն Հայեցակարգի (1) «Դրամական միջոցների օգտագործում», (2) «Նախագծերի գնահատման և ընտրության գործընթաց», (3) «Դրամական միջոցների կառավարում» և (4) «Հաշվետվություններ» բաժիններով սահմանված դրույթների պահպանումը:

4. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

ԱՀԸ-ն գիտակցում է, որ Կանաչ պարտատոմսի հիմնարար սկզբունքն այն է, որ պարտատոմսից գոյացած դրամական միջոցները պետք է հատկացվեն հստակ բնապահպանական օգուտ ապահովող Կանաչ նախագծերին: Կանաչ պարտատոմսերի թողարկումից գոյացած զուտ հասույթին հավասար գումարն ուղղվելու է ակնհայտ և նշանակալի բնապահպանական օգուտ ապահովող Ընդունելի վարկերի վերաֆինանսավորմանը:

Ընդունելի վարկ են համարվում այն վարկերը, որոնց տրամադրումն ի սկզբանե նախաձեռնվել է ԱՀԸ-ի գործընկեր ֆինանսական հաստատությունների (ԳՖՀ) կողմից՝ կնքված Հիմնական վարկային համաձայնագրերի ներքո, ստորև սահմանված Ընդունելի կանաչ կատեգորիաներում նշված համապատասխան ծրագրերի վերաֆինանսավորման ընթացակարգերն ապահովելուց հետո: Յուրաքանչյուր կատեգորիայի համար սահմանվում են որակավորման ընդհանուր չափանիշներ: Մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Կանաչ ստանդարտներում և համապատասխան Վերաֆինանսավորման ընթացակարգին առնչվող ենթաօրենսդրական ակտերում (այսուհետ՝ «Հիմնական փաստաթղթեր»), որոնք հրապարակված են ԱՀԸ-ի ինտերնետային կայքում:



Ըստ նպատակի, Ընդունելի վարկերը կարող են բաժանվել երեք հիմնական խմբերի, այն է՝ վերանորոգում, ձեռքբերում և առանձնատան կառուցում: Էներգաարդյունավետության գնահատման գործիքը (ԷԱԳԳ) մշակվել է GOPA-AFC խորհրդատվական ընկերության հետ համատեղ, ՎՎԲ-ի ֆինանսական աջակցությամբ: Այդ գործիքն ընդգրկում է Կանաչ ստանդարտների վերաբերյալ հրապարակված փաստաթղթում սահմանված բոլոր չափանիշները: Որպես «Կանաչ» և ընդունելի ներկայացվող յուրաքանչյուր վարկ ենթակա է գնահատման ԷԱԳԳ-ի միջոցով. դրական արդյունքի դեպքում այն կհամարվի ընդունելի:

ԷԱԳԳ-ն ԱՀԸ-ին հնարավորություն է տալիս՝ պահպանել և վերահսկել Էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումները, ներառյալ Էներգիայի խնայողությունը և CO2 արտանետումների կրճատումը «Կանաչ պարտատոմս» ծրագրի ներքո վերաֆինանսավորվող առանձին վարկի մակարդակով: Այն նաև օգտագործվում է ներդրողներին և այլ շահագրգիռ կողմերին հաշվետվություններ ներկայացնելու նպատակով:

Ընկերությունը պարտավորվում է շարունակաբար կիրառել իր մասնագիտական դատողությունն ու փորձը՝ Ընդունելի վարկերը սահմանելիս Կանաչ ստանդարտները և ԷԱԳԳ-ն թափանցիկ կերպով թարմացնելու համար: Բացի այդ, Ընկերությունն իր տարեկան հաշվետվության մեջ հստակ ներկայացնելու է Ընդունելի վարկերի տրամադրման ժամկետները:

Ընդունելի վարկ են համարվում այն վարկերը, որոնց նպատակն է՝ ֆինանսավորել ստորև բերված աղյուսակում սահմանված Ընդունելի կատեգորիաներին դասվող ակտիվները:

Ընդունելի վարկատեսակների կատեգորիաներ	Համառոտ նկարագրություն
«Կանաչ» բնակարանների	Վարկատեսակը նախատեսված է Հիմնական փաստաթղթերով սահմանված «Կանաչ» չափանիշներին



ձեռքբերման վարկեր	համապատասխանող առանձնատուն կամ բնակարան գնելու համար: Բնակելի անշարժ գույքի պարագայում, վարկը «Կանաչ» է համարվում ներքոնշյալ դեպքերում. - Առաջնային շուկայում նախագիծը (բազմաբնակարան շենք կամ բնակելի համալիր) պետք է ունենա հավաստագրված մարմնի կողմից տրամադրված էներգետիկ անձնագիր, և ենթադրվող ԷԱ դասը պետք է լինի առնվազն B: Դա ենթադրում է առնվազն 20% էներգախնայողություն՝ հիմք ընդունելով սահմանված բազային սցենարը: - Երկրորդային շուկայում բազմաբնակարան շենքը կամ բնակելի համալիրը պետք է ունենա հավաստագրված մարմնի կողմից տրամադրված էներգետիկ անձնագիր, և ԷԱ դասը պետք է լինի առնվազն B: Դա ենթադրում է առնվազն 20% էներգախնայողություն՝ հիմք ընդունելով սահմանված բազային սցենարը: Ի լրումն ԷԱ դասի պահանջի, բազմաբնակարան շենքը կամ նախագիծը համարվում է ընդունելի, եթե իրականացված են կամ նախագծով նախատեսված է իրականացնել կանաչ վերանորոգման հետևյալ միջոցառումները. - շենքը ջերմամեկուսացված է, և - արտաքին դռները և պատուհանները, որոնք բավարարում են Կանչ ստանդարտներով սահմանված նվազագույն չափանիշներին, տեղադրված են:
--------------------------	--



	Ծրագրի շրջանակներում բնակարանների/առանձնատների գնման նախագիծը պետք է գնահատվի ԷԱԳԳ-ի կիրառմամբ՝ հիմք ընդունելով էներգետիկ ոլորտում հավաստագրված անկախ աուդիտորի կողմից տրամադրված էներգետիկ անձնագիրը: Վերաֆինանսավորման համար ընդունելի բոլոր նախագծերի ցանկը հրապարակվելու է ԷԱԳԳ-ի ինտերնետային կայքում:
«Կանաչ» առանձնատների կառուցման վարկեր	Վարկատեսակը նախատեսված է առանձնատների կառուցման համար: Նորակառույց առանձնատունը «Կանաչ» է համարվում, ներքոնշյալ հատուկ միջոցները ձեռնարկված լինելու դեպքում. - Արտաքին պատերը ջերմամեկուսացված են, և մեկուսացման նվազագույն հաստությունը 5 սմ է, - Տանիքը ջերմամեկուսացված է, և ջերմամեկուսացման նվազագույն հաստությունը 15 սմ է, - Տեղադրված են էներգաարդյունավետ պատուհաններ և մուտքի դռներ՝ երկշերտ կամ եռաշերտ ապակեպատվածքով և ՊՎՔ-ից կամ ալյումինից պատրաստված շրջանակներով, ջերմախզիչ միջուկով: Էներգաարդյունավետության ապահովման բոլոր այն միջոցառները, որոնք սահմանված են վերանորոգման կանաչ վարկերի համար, կիրառվում են նաև այս վարկատեսակի նկատմամբ:



	Առանձնատների կառուցման նախագծերը պետք է ապահովեն էներգիայի սպառման առնվազն 20% կրճատում՝ հիմք ընդունելով սահմանված բազային սցենարը: Մանրամասն չափանիշները ներկայացված են Հիմնական փաստաթղթերում: Ծրագրի շրջանակներում առանձնատան կառուցման նախագիծը պետք է գնահատվի ԷԱԳԳ-ի կիրառմամբ:
«Կանաչ» վերանորոգման վարկեր	Վարկատեսակը նախատեսված է բնակարանների կամ առանձնատների էներգաարդյունավետության բարելավման համար: Վարկը «Կանաչ» է համարվում, եթե վարկի գումարի նվազագույնը 90%-ն օգտագործվելու է ԷԱ գծով բարելավումներ կատարելու համար: : Էներգաարդյունավետության բարելավման ընդունելի միջոցներն են. • Արտաքին պատերի և/կամ տանիքի ջերմամեկուսացում և/կամ • Պատուհանների և/կամ մուտքի դռան տեղադրում և/կամ • LED լամպերի տեղադրում և/կամ • Արևային ջրատաքացուցիչների տեղադրում և/կամ • ՖՎ պանելների տեղադրում Էներգաարդյունավետության գծով նվազագույն պահանջները և վարկատեսակի համար սահմանված չափանիշները ներկայացված են Հիմնական փաստաթղթերում:



	Ծրագրի շրջանակներում բնակարանի/առանձնատան բարեկարգման նախագիծը պետք է գնահատվի ԷԱԳԳ-ի կիրառմամբ:
--	---

Ուրբանացումը սահմանափակելու և ապահովելու համար, որ «Կանաչ պարտատոմս» ծրագիրը չաջակցի հողօգտագործման փոփոխությանը հանգեցնող նոր նախագծերին, ԱՀԸ-ն կանաչ վարկերի գծով լրացուցիչ պահանջներ է սահմանել: Մասնավորապես, առաջնային շուկայում իրականացվող նախագծերի դեպքում պետք է ներկայացվեն ապացույցներ առ այն, որ հողատարածքի օգտագործման նպատակը վերջին 12 ամիսների ընթացքում չի փոխվել:

5. ՆԱԽԱԳԾԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ԱՀԸ-ում ընդունելի կանաչ վարկերի գնահատումը և ընտրությունը կարևոր գործընթաց է, որի նպատակն է՝ ապահովել, որ Կանաչ պարտատոմսերից գոյացած զուտ դրամական միջոցներին համարժեք գումարը հատկացվի սույն Հայեցակարգով և Հիմնական փաստաթղթերով սահմանված չափանիշներին բավարարող ակտիվներին: ԱՀԸ-ն ակտիվների գնահատման և ընտրության գործընթացն իրականացնում է վերահսկվող ավտոմատացված գործընթացի միջոցով, որին մասնակցում են Վարկային և Ռիսկերի կառավարման ու մոնիտորինգի ստորաբաժանումները, ինչպես նաև ԱՊԿԿ-ին կից գործող Կանչ պարտատոմսերի ենթակոմիտեն ու ներքին աուդիտը: Գործընթացը տարեկան կտրվածքով ստուգվում է արտաքին անկախ աուդիտորի կողմից:

Ընդունելի վարկերի մշակման գործիքը ներառում է համապատասխանության ապահովման երկշերտ ընթացակարգ, քանի որ վարկերը ենթարկվում են ԱՀԸ-ի վարկավորման ստանդարտ գործընթացներին՝ գործունեության բնականոն շրջանակներում, և ապա անցնում են տեղաբաշխման հատուկ գործընթացով՝ ԱՀԸ-ի կողմից կիրառվող Ընդունելի կանաչ վարկատեսակների կատեգորիաների չափանիշներին և Կանաչ ստանդարտներին համապատասխան: Քանի որ բոլոր



ենթադրաբար ընդունելի վարկերը, ԱՀԸ-ի վարկավորման ստանդարտ գործընթացի շրջանակներում, պետք է մշակվեն ԷԱԳԳ-ի միջոցով, և այդ գործիքը նախատեսված է ընդունելի վարկերն ավտոմատ կերպով որպես կանաչ կամ Հիմնական փաստաթղթերում սահմանված ցանկացած այլ կատեգորիայի ներքո դասակարգելու համար, ԷԱԳԳ-ն ապահովում է Կանաչ վարկերի ընդունելի համախումբ: Այնուհետև ընդունելի համախմբից վարկերը վերագրվում են համապատասխան Կանաչ պարտատոմսին:

ԱՀԸ-ն ստեղծել է Կանաչ պարտատոմսերի ներքին ենթակոմիտե (ԿՊԿ)՝ Նախագծերի գնահատման և ընտրության վերահսկողական գործառույթն իրականացնելու համար: ԿՊԿ-ի կազմում ընդգրկվում են անդամներ Ռիսկերի կառավարման և մոնիտորինգի, վարկային և ֆինանսական ստորաբաժանումներից: Այսպիսով, ԿՊԿ-ն պարբերաբար հանդիպում է ԱՊԿԿ-ի նիստերի ընթացքում, քանի դեռ մարված չէ որևէ Կանաչ պարտատոմս: ԿՊԿ-ն պատասխանատու է Կանաչ պարտատոմսերի հայեցակարգի բովանդակության և իրագործման համար, ներառյալ հաստատված վարկերի ընտրության չափանիշների սահմանումը և վերահսկողությունը, հասույթի կառավարումը, հաշվետվությունների ներկայացման գործընթացը և արտաքին գնահատումը: ԿՊԿ-ն պետք է իրականացնի հաստատված վարկերի վերահսկողությունը, հետևյալ քայլերի միջոցով.

1. Կանաչ պարտատոմսերի հայեցակարգը սահմանում է Ընդունելի կանաչ վարկատեսակների կատեգորիաներին վերաբերող չափանիշները: Ընդհանուր ուղեցույցների շրջանակներում կիրառվող հատուկ չափանիշները ներկայացված են Հիմնական փաստաթղթերում, որոնց թվին են պատկանում նաև Հիմնական վարկային համաձայնագրերը:
2. ԱՀԸ-ի Վարկային ստորաբաժանումը ստուգում է գործող վերաֆինանսավորված վարկերի պորտֆելը՝ հիմք ընդունելով սույն Հայեցակարգում և Հիմնական փաստաթղթերում սահմանված ընտրության չափանիշները, և ընտրում է այն վարկերը, որոնց ֆինանսավորման համար թույլատրելի է օգտագործել Կանաչ պարտատոմսից ստացված միջոցները (Ընդունելի վարկեր): Այնուհետև ընտրված վարկերը դիտարկվում են ԿՊԿ-ի կողմից՝ համոզվելու համար, որ ներկայացված Կանաչ վարկերը



համապատասխանում են սույն Հայեցակարգով և Հիմնական փաստաթղթերով սահմանված պահանջներին:

3. ԿՊԿ-ն պետք է վերահսկի Ընդունելի վարկերի հատկացումը՝ ապահովելով, որ դրանց ընդհանուր գումարը առնվազն հավասար լինի Կանաչ պարտատոմսից գոյացած զուտ հասույթին:
 - Եթե ներկայացված որևէ Կանաչ վարկ այլևս չի համապատասխանում սահմանված չափանիշներին, ապա այն պետք է փոխարինվի մեկ այլ ընդունելի Կանաչ վարկով՝ ապահովելու համար, որ Կանաչ պարտատոմսից ստացված զուտ հասույթը մշտապես ուղղվի ընդունելի վարկերի վերաֆինանսավորմանը:
4. ԿՊԿ-ն ապահովում է յուրաքանչյուր ընդունելի Կանաչ վարկի վերագրումը ֆինանսավորման մեկ աղբյուրի:
5. ԿՊԿ-ն պետք է ապահովի, որ Կանաչ պարտատոմսից ստացված հասույթը չհատկացվի *Հավելված Ա-ով (Չֆինանսավորվող գործունեության տեսակներ)* սահմանված ոլորտներին վերաբերող վարկերի ֆինանսավորմանը:
6. ԿՊԿ-ն պետք է պարբերաբար ուսումնասիրի Տեղաբաշխման և Ազդեցության գնահատման հաշվետվությունը:

Վարկերի համապատասխանությունը սահմանված չափանիշներին գնահատվում է ստորև ներկայացված գծապատկերում նկարագրված գործընթացի համաձայն (**Նախագծերի գնահատման և ընտրության գործընթաց**):



Նախագծերի գնահատման և ընտրության գործընթաց



ԱՀԸ-ն գիտակցում է, որ Կանաչ պարտատոմսերի շուկայում գործող ստանդարտներն ու պահանջները մշտապես փոփոխվում են: ԿՊԿ-ն, ընտրության



աշխատանքները կատարելիս, հաշվի է առնելու այդ փոփոխությունները և լավագույն փորձը:

6. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ԱՀԸ-ն վարելու է հատուկ հաշիվ(ներ)՝ բացառապես Կանաչ պարտատոմսերի գործարքների հաշվառման համար: ԱՀԸ-ն ջանասիրաբար հետևելու և կվերահսկելու է այդ հաշիվները ֆորմալ ներքին գործընթացի միջոցով, որը սերտորեն կապակցված է լինելու ԱՀԸ-ի կողմից Կանաչ նախագծերի առնչությամբ իրականացվող վարկավորման և ներդրումային գործառնությունների հետ:

Կանաչ պարտատոմսից ստացված զուտ հասույթը մուտքագրվելու է հատուկ հաշիվներին և պատշաճ կերպով վերահսկվելու է ԱՀԸ-ի ներքին հաշվապահական հաշվառման համակարգի, վարկերի գրանցամատյանի և այլ համապատասխան համակարգերի միջոցով:

ԱՀԸ-ն գիտակցում է, որ նոր Կանաչ պարտատոմսերի յուրաքանչյուր թողարկման պահին Ընդունելի վարկեր կարող են առկա չլինել ԱՀԸ-ի պորտֆելում՝ զուտ հասույթին հավասար կամ այն գերազանցող գումարի չափով: ԱՀԸ-ն դրամական միջոցները հատկացնելու է յուրաքանչյուր Կանաչ պարտատոմսի համապատասխան թողարկման փաստաթղթերում սահմանված ժամկետներում: Այդ սահմանված ժամկետը կոչվում է «առաջնային տեղաբաշխման ժամանակահատված»: ԱՀԸ-ն պարտավորվում է խելամիտ առաջնային տեղաբաշխման ժամանակահատվածում տրամադրել, նույնականացնել և հատկացնել Ընդունելի կանաչ վարկերն իր Կանաչ պարտատոմսից գոյացած զուտ հասույթին հավասար կամ այն գերազանցող գումարի չափով: Մինչև ամբողջ հասույթի հատկացումն Ընդունելի կանաչ վարկերին, ԱՀԸ-ն օգտագործելու է չտեղաբաշխված դրամական միջոցներն իր իրացվելիության կառավարման քաղաքականությանը համապատասխան: Դա նշանակում է, որ չտեղաբաշխված միջոցները ժամանակավորապես կարող են ներդրվել այնպիսի գործիքներում, ինչպիսիք են դրամական միջոցները և դրանց համարժեքները, ավանդները և գործընկեր ֆինանսական հաստատությունների կողմից թողարկված պարտատոմսերը,



պետական պարտատոմսերը կամ արտարժույթի և տոկոսադրույքների հեջավորման գործիքները, հաշվի առնելով Հավելված Ա-ով սահմանված Չֆինանսավորվող գործունեության տեսակները:

Բոլոր ներկայացված Կանաչ վարկերը, որոնք ընտրվում են Ընդունելի կանաչ վարկերի ընդհանուր ֆոնդից, պատշաճ կերպով գրանցվելու են ԱՀԸ-ի համապատասխան համակարգերում: Ներկայացված Կանաչ վարկերի ֆոնդը, ինչպես նաև ներկայացված վարկերի ցանկացած փոխարինում, հետևողականորեն գրանցվելու և կվերահսկվելու է ԱՀԸ-ի Կանաչ պարտատոմսերի կոմիտեի կողմից:

7. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀԸ-ն առնվազն տարեկան կտրվածքով պետք է ներկայացնի եկամուտների օգտագործման մասին հաշվետվություն՝ մինչև ամբողջական տեղաբաշխումը, ինչպես նաև տեղաբաշխումից հետո, վարկային պորտֆելի, Կանաչ պարտատոմսերի սկզբունքների կամ այլ կարևոր արտաքին հանգամանքների հետ կապված որևէ էական փոփոխության դեպքում:

Թափանցիկության և հաշվետվողականության պահպանման պահանջները կատարելու համար ԱՀԸ-ի հաշվետվությունների ներկայացման ընթացակարգը ներառում է ինչպես Տեղաբաշխման, այնպես էլ Ազդեցության գնահատման հաշվետվություններ:

Տեղաբաշխման և Ազդեցության գնահատման պատշաճ փաստաթղթավորման համար տարեկան հաշվետվությունը պետք է ներառի առնվազն հետևյալ ցուցանիշները.

- Թողարկված Կանաչ պարտատոմսերի ընդհանուր ծավալը և մարման ժամկետը,
- Ընդունելի վարկերի ընդհանուր գումարը և քանակը,
- Ընդունելի վարկերի տեղաբաշխման մանրամասն տեղեկատվություն, ըստ նախագծի կատեգորիաների,
- Ընդունելի վարկերի բաշխվածությունն ըստ տրամադրման ամսաթվի,
- Չտեղաբաշխված հասույթի մնացորդը, առկայության դեպքում,



- Ընդունելի վարկերի ակնկալվող/փաստացի ազդեցության վերլուծություն, ըստ նախագծի կատեգորիայի,
- Նախագծի յուրաքանչյուր կատեգորիայի հնարավոր ազդեցության ցուցանիշները:

Ցուցանիշների ցանկը ներկայացված է ստորև.

Կանաչ նախագծերի կատեգորիաներ	Հնարավոր արդյունավետության հիմնական ցուցանիշների օրինակ
Կանաչ շենքեր	• Գնահատված տարեկան էներգախնայողություն (կՎտժ) • ԶԳ արտանետումների գնահատված տարեկան կրճատում կամ կանխարգելում (tCO₂ համարժեք) • Սխեմայի տեսակը, հավաստագրման մակարդակը, կիրառելիության դեպքում
Վերականգնվող էներգիա	• Վերականգնվող էներգիայի գնահատված տարեկան արտադրություն (կՎտժ) • ԶԳ արտանետումների գնահատված տարեկան կրճատում (tCO₂ համարժեք)
Էներգաարդյունավետություն	• Գնահատված տարեկան էներգախնայողություն (կՎտժ) • ԶԳ արտանետումների գնահատված տարեկան կրճատում (tCO₂ համարժեք)



8. ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

8.1. Արտաքին գնահատում (նախքան թողարկումը)

ԱՀԸ-ի կանաչ պարտատոմսերի հայեցակարգի իրագործելիությունը հաստատելու նպատակով ԱՀԸ-ն պետք է ձեռք բերի որևէ արտաքին հեղինակավոր կազմակերպության կարծիքը: Արտաքին կողմի կարծիքը հրապարակվելու է Ընկերության ինտերնետային կայքում:

8.2. Արտաքին աուդիտ (թողարկումից հետո)

ԱՀԸ-ի արտաքին աուդիտորը կամ որևէ այլ որակավորված անկախ կողմ տարեկան կտրվածքով՝ մինչև սույն Հայեցակարգի համաձայն թողարկված ցանկացած Կանաչ պարտատոմսի մարումը, պետք է ստուգի՝ արդյոք ԱՀԸ-ն պատշաճ կերպով կատարել է սահմանված պահանջները և արդյոք ցանկացած Կանաչ պարտատոմսից ստացված զուտ հասույթին հավասար գումար ուղղվել է Ընդունելի վարկերի տրամադրմանը, ինչպես սահմանված է սույն Հայեցակարգով: Նշված հաշվետվությունը պետք է ներառի նաև շրջակա միջավայրի վրա ներդրումների ազդեցության գնահատումը:



9. Հավելված Ա. Չֆինանսավորվող գործունեության տեսակներ

ԱՀԸ-ն չի ֆինանսավորում այնպիսի ապրանքների արտադրություն, օգտագործում կամ առևտուր կամ գործունեության այնպիսի տեսակներ, որոնք արգելված են Հայաստանի Հանրապետության օրենքներով կամ Միջազգային կոնվենցիաներով և պայմանագրերով:

Առանց սահմանափակելու վերը նշված ընդհանրացված սահմանումը, ԱՀԸ-ն չի տրամադրելու կանաչ պարտատոմսերի թողարկումից ստացված միջոցները գործունեության հետևյալ տեսակների համար նախատեսվող վարկեր ֆինանսավորելու համար.

1. Միավորված ազգերի կազմակերպության, Եվրամիության, Հայաստանի Հանրապետության կամ Ֆրանսիայի կողմից կիրառվող տնտեսական պատժամիջոցների ենթակա ցանկացած սարքավորում, ոլորտ կամ ծառայություն՝ առանց գումարի բացարձակ կամ հարաբերական սահմանափակման,
2. Արտադրություն կամ գործունեություն, որտեղ օգտագործվում է հարկադիր աշխատուժե¹, մանկական աշխատուժե² կամ մարդկանց թրաֆիքինգ,³
3. Մարդու օրգանների և հյուսվածքների հետ կապված ապօրինի գործողություններ կամ գենետիկ ինժեներիային գործունեություն, որն արգելված է Հայաստանի Հանրապետության կամ Ֆրանսիայի⁴ ազգային կենսաէթիկայի չափանիշներով և կիրառելի եվրոպական կամ միջազգային չափանիշներով,⁵

¹ «Հարկադիր աշխատուժե» նշանակում է ցանկացած աշխատանք կամ ծառայություն, որը կատարվում է ոչ թե անհատի սեփական կամքով, այլ ուժի կամ պատժի սպառնալիքի ազդեցությամբ, ինչպես սահմանված է «Աշխատանքի միջազգային կազմակերպության» (ԱՄԿ) կողմից ընդունված կոնվենցիաներում:

² Աշխատողները պետք է լինեն առնվազն 14 տարեկան, ինչպես սահմանված է ԱՄԿ-ի Աշխատանքային հիմնարար սկզբունքների և իրավունքների մասին հռչակագրում (C138 – Նվազագույն տարիքի կոնվենցիա, հոդված 2), բացառությամբ այն դեպքերի, երբ երկրի օրենքներով պահանջվում է պարտադիր դպրոցական կրթություն կամ նվազագույն տարիք աշխատանքի ընդունվելու համար: Նման հանգամանքներում պետք է օգտագործվի ամենաբարձր տարիքային պահանջը:

³ Եվրոպայի Խորհրդի «Մարդկանց թրաֆիկինգի դեմ պայքարի մասին» կոնվենցիա, Հրահանգ 2011/36/ԵՄ:

⁴ Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգրքի հոդված 16 (հիմնականում 1994թ. հուլիսի 29-ին ընդունված թիվ 94-653 օրենքով և 2004թ. օգոստոսի 6-ին ընդունված կենսաէթիկայի մասին թիվ 2004-800 օրենքով սահմանված կետեր):

⁵ «Կենսաբանության և բժշկության նվաճումների կիրառման առնչությամբ մարդու իրավունքների և արժանապատվության պաշտպանության մասին» կոնվենցիա. «Մարդու իրավունքների պաշտպանության և կենսաբժշկության մասին» կոնվենցիա (Օվիեդո, 04/04/1997թ.), «Մարդու օրգանների թրաֆիքինգի դեմ» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա (Սանտյագո դե Կոմպոստելա, 25/03/2015թ.):



4. Կենդանիների, բույսերի կամ ցանկացած բնական արտադրանքի առևտուր, արտադրություն, բուծում կամ տիրապետում «Վայրի ֆաունայի և ֆլորայի վտանգված տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիայի (CITES) դրույթների խախտմամբ,⁶
5. Ձկնորսություն՝ 2,5 կմ-ից ավելի երկարությամբ դրիֆտերային ցանց օգտագործմամբ,
6. Գենետիկորեն ձևափոխված սերմերի հետազոտություն, գնում, կիրառման խթանում կամ տարածում,
7. Վտանգավոր նյութերի (օր. ասբեստի մանրաթելերի) և բոլոր այնպիսի ապրանքների (այդ թվում՝ քիմիական արտադրանք, դեղորայք, թունաքիմիկատներ, օզոնը քայքայող նյութեր⁷ կամ որևէ այլ վտանգավոր արտադրանք) արտադրություն, օգտագործում կամ առևտուր, որոնց արտադրությունը կամ օգտագործումն արգելված է կամ աստիճանաբար արգելվելու է համապատասխան երկրների կանոնակարգերով կամ միջազգային մակարդակով,
8. Թափոնների անդրսահմանային առևտուր, բացառությամբ այն դեպքերի, որոնք համապատասխանում են Բազելյան կոնվենցիային⁸ և դրա հիմքում ընկած կանոնակարգերին,
9. Ադամանդի հանքավայրերի շահագործում և ադամանդի շուկայավարում այն երկրներում, որոնք չեն միացել Քիմբերլիի գործընթացին,
10. Մշակութային արժեքների ապօրինի առևտուր կամ գործունեություն, որը նպաստում է մշակութային արժեքների ապօրինի տեղափոխմանը:⁹
11. Արտադրություն կամ առևտուր.

(i) կապված պոռնոգրաֆիայի կամ մարմնավաճառության հետ,

Ներքոնշյալի արտադրություն կամ առևտուր.¹⁰

⁶ CITES. «Ոչնչացման վտանգի տակ գտնվող ֆաունայի և ֆլորայի վայրի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիա (Վաշինգտոն, 1973թ.):

⁷ Ցանկացած քիմիական տարր, որը վնասում և ոչնչացնում է ստրատոսֆերային օզոնային շերտը, ինչը հանգեցնում է այդ շերտում «անցքերի» ձևավորմանը: Մոնրեալի արձանագրությունը թվարկում է օզոնը քայքայող նյութերը (ՕՔՆ), դրանց նվազեցման թիրախները և աստիճանական վերացման ժամկետները:

⁸ «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» Բազելյան կոնվենցիան հրապարակված է www.basel.int կայքում:

⁹ Մշակութային արժեքների առևտուրը կարգավորվում է «Մշակութային արժեքների ապօրինի ներմուծման, արտահանման և սեփականության իրավունքի փոխանցման արգելմանն ու կանխմանն ուղղված միջոցառումների մասին» կոնվենցիայով (1970թ.):

¹⁰ Եթե այդ գործողությունները կազմում են ֆինանսավորվող կողմի շրջանառության ավելի քան 10%-ը կամ, եթե հաճախորդը ֆինանսական միջնորդ է, ապա նրա գործող պորտֆելի ավելի քան 10%-ը:



- (ii) զենք և/կամ զինամթերք,
- (iii) ծխախոտ,
- (iv) ալկոհոլային խմիչքներ (բացառությամբ գարեջրի և գինու),
- (v) խաղային հաստատություններ, խաղատներ կամ նմանատիպ ձեռնարկություններ,¹¹

12. Ռասիստական կամ հակադեմոկրատական կամ բնակչության որևէ մասի նկատմամբ խտրականություն խրախուսող լրատվական նյութերի ստեղծում և տարածում կամ մասնակցություն դրանց ստեղծմանն ու տարածմանը,
13. Գործողություններ, որոնք հանգեցնում են մշակութային ժառանգության որևէ կարևոր տարրի անդառնալի փոփոխության կամ տեղափոխման,¹²
14. Հանածո վառելանյութով աշխատող էլեկտրակայանների կառուցման, ընդլայնման կամ վերանորոգման նախագծեր,¹³
15. Սույն ցանկի 14-րդ կետում նշված հանածո էներգիայի պաշարների արտադրության, պահպանման կամ վերամշակման համար օգտագործվող օբյեկտին (հանքավայրեր, վերամշակման կայաններ, պահեստներ և այլն) առնչվող ենթակառուցվածք¹⁴,
16. Ածխի, գազի և նավթի (մշակված կամ չմշակված) հետազոտման, արտադրության կամ վերամշակման կամ բացառապես դրանց փոխադրման նախագծեր,
17. Կենսաբազմազանություն.

- (i) Ցանկացած ֆինանսավորում (ա) Զրոյական ոչնչացման դաշինքի տարածքներում (ԶՈԴ)^{15/16}, (բ) ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված բնական և խառը վայրերում²⁰ և (գ)

¹¹ Այդպիսի նախագծերի կամ գործունեության ցանկացած ուղղակի ֆինանսավորում (օր. հյուրանոց, որտեղ նաև խաղատուն է գտնվում): Դա չի վերաբերում քաղաքաշինական ծրագրերին, որոնք հետագայում կարող են ինտեգրել նման նախագծեր:

¹² «Կարևոր մշակութային ժառանգություն» է համարվում ժառանգության ցանկացած տարր, որը միջազգայնորեն կամ ազգային մակարդակով ճանաչված է որպես պատմական, սոցիալական և/կամ մշակութային հետաքրքրություն ներկայացնող:

¹³ Բացառությամբ հիբրիդային էլեկտրակայանների կողմից սպասարկվող մինի-ցանցերի (վերականգնվող էներգիայի և հանածո վառելանյութի համակցությամբ) նախագծերի:

¹⁴ «Առնչվող ենթակառուցվածք» տերմինն օգտագործվում է այն դեպքում, երբ ենթակառուցվածքն առնչվում է հանածո վառելանյութ օգտագործող արտադրական օբյեկտին՝ հետևյալ երկու պայմանների առկայության պարագայում. i) տվյալ հանածո վառելանյութն օգտագործող օբյեկտի բացակայության դեպքում ենթակառուցվածքը չէր կառուցվի, և ii) հանածո վառելանյութն օգտագործող օբյեկտը տնտեսապես կենսունակ չէր լինի առանց տվյալ ենթակառուցվածքի:

¹⁵ Բացառությամբ այն դեպքերի, երբ ֆինանսավորվող գործունեության և հարակից օբյեկտների ազդեցությունը չի տարածվում այն տարածքների վրա, որոնք համապատասխանում են ԶՈԴ տարածք համարվելու չափանիշներին. <https://zeroextinction.org/site-identification/aze-site-criteria/>

¹⁶ Բացառությամբ այն դեպքերի, երբ ֆինանսավորման նպատակն է՝ պահպանել կամ վերականգնել այդ տարածքները:



օրենսդրորեն պաշտպանվող տարածքներում (ԲՊՄՄ կատեգորիաներ)¹⁷
և

(ii) Ցանկացած գործողություն, որը հանգեցնում է կրիտիկական կենսամիջավայրի վրա բացասական և անդառնալի¹⁸ մնացորդային¹⁹ ազդեցության,^{20 / 21}

(iii) Ցանկացած անտառատնտեսական կամ գյուղատնտեսական նախագիծ, որն ունի լայն ընդգրկում (>100 հա) և որը չի կիրառում գրոյական անտառահատում ապահովող մեթոդաբանություն²²,

18. Նախագծեր, որոնց նպատակը և/կամ մոտեցումը հակասում են մարդու իրավունքներին, իսկ մասնավոր հատվածի ֆինանսավորման դեպքում՝ նախագծեր, որոնց հիմնավորումներն ակնհայտորեն հակասում են Միավորված ազգերի կազմակերպության՝ Ձեռնարկատիրական գործունեության և մարդու իրավունքների գծով սահմանված սկզբունքներին,²³

19. Նախագծեր, որոնց դեպքում հայտնի է, որ առաջարկվող նախագծի ազդեցության տարածքում տեղի է ունեցել Միավորված ազգերի կազմակերպության կողմից սահմանված իմաստով²⁴ բռնի տեղահանում, որը կարող է պատճառահետևանքային

¹⁷ Բացառությամբ այն դեպքերի, երբ ֆինանսավորման նպատակն է՝ պահպանել կամ վերականգնել այդ տարածքները, կամ երբ այն նպատակն է դրանց կառավարման և տարածքային պլանավորման միջոցառումներին, ինչպիսիք են ֆինանսավորվող գործողություններին առնչվող միջազգային չափանիշներով սահմանված ծրագրերում նշվածները. Պահպանվող տարածքների համաշխարհային տվյալների բազայի I-VI կատեգորիաներ | ԲՊՄՄ.

<https://www.iucn.org/our-work/protected-areas-and-land-use>

¹⁸ Անդառնալի ազդեցություն. կենսաբազմազանության կամ կենսամիջավայրի կարևորագույն նշանակությունը երաշխավորող էկոլոգիական գործառնությունների կամ բնութագրերի մշտական փոխակերպում կամ աղքատացում:

¹⁹ Մնացորդային ազդեցություն. նախագծի չափելի ազդեցությունը կենսաբազմազանության արժեքի վրա՝ կանխարգելիչ և մեղմացնող միջոցառումների իրականացումից հետո, սակայն մինչև վերականգնման և փոխհատուցման միջոցառումների իրականացումը:

²⁰ Կրիտիկական կենսամիջավայր. Համաշխարհային բանկի Բնապահպանական և սոցիալական ստանդարտ 6 – 2018 կամ IFC-GN PS6 2019 փաստաթղթով սահմանված իմաստով:

²¹ Եթե տվյալ նախագիծը գերակա ընդհանուր հետաքրքրություն չի ներկայացնում իրականացման երկրի համար, որի դեպքում Խմբի ղեկավարությանը կարող է ներկայացվել համապատասխան շեղում թույլատրելու հայտ:

²² Մեթոդաբանություն, որը ներառում է. (i) բարձր ածխածնային պաշարների մոտեցմանը համարժեք ուղենշային գործիք, որը թույլ է տալիս անտառների դասակարգում կատարել, (ii) երաշխիք, որ ածխածնի բարձր պաշարներով որևէ անտառ չի վնասվի ծրագրի շրջանակներում և (iii) անտառաձածկույթի մոնիտորինգ (դաշտային կամ արբանյակային մոնիտորինգ):

²³ https://www.ohchr.org/documents/publications/guidingprinciplesbusinessshr_en.pdf

²⁴ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների պաշտպանության ենթակոմիտեի 1993/41 բանաձև. «Բռնի տեղահանում»: «Բռնի տեղահանում» [...] տերմինը նշանակում է մարդկանց, ընտանիքների և/կամ համայնքների տներից և/կամ հողատարածքներից մշտական կամ ժամանակավոր հեռացում իրենց կամքին հակառակ, առանց համապատասխան իրավական կամ այլ տեսակի պաշտպանության հնարավորություն տրամադրելու: Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հարցերով կոմիտե, ընդհանուր մեկնաբանություն թիվ 7: https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=INT/CESCR/GEC/6430&Lang=en



կապ ունենալ այդ նախագծի նպատակի հետ, և որը հնարավոր չէ փոխհատուցել նյութապես²⁵:

²⁵ Ծրագրի հովանավորի կողմից մերժման կամ բռնի տեղահանման ենթարկված բնակչությանը նույնականացնելու անկարողության պատճառով: Այս սահմանափակումը չի տարածվելու այն նախագծերի վրա, որոնց դեպքում կարող է տրամադրվել խախտված իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոց: